ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ, Երվանդ Օտյան. Կյանքը և գործը, «Հայագիտակ» հրատ., Ե., 1996, 280 էջ։

Նոր շրջանի հայ գրականության դասականների շարքում Երվանդ Օտյանի տեղը որոշակի է. նա երգիծաբան է և Հակոբ Պարոնյանի հետ մինչև այսօր միանձնյա գրաղեցնում է այդ դաշտը՝ չունենալով հավասարազոր մրցակից։ Ցնայած դրան, գրեթե հարյուրամյա փորձ կուտակած օտյանագիտությունը, մեծ երգիծաբանի ստեղծագործության հետ կապված բազմաթիվ հարցեր լուծած լինելով հանդերձ, շատ խնդիրներ էլ թողել է առկախ կամ ավելի է խճճել անսպառ ասպարեզ տրամադրելով ուսումնասիրողների նորանոր սերունդների։ Ս. Մուրադյանի «Երվանդ Օտյան. Կյանքը և գործը» մենագրությունը մեկ անգամ ևս հաստատում է այս իրողությունը։

Վերջին ժամանակներս մի տեսակ քամահրական վերաբերմունք է նկատվում այս տիպի ուսումնասիրությունների հանդեպ. հետազոտողները հրապուրվում են առավել տեսական, հիմնախնդրային հետաքրքրություն ներկայացնող իրողություններով։ Իսկ եթե մեկը, այնուամենայնիվ, նախընտրում է ավանդական մենագրության տիպը, պետք է ունենա ծանրակշիռ կովաններ։ Տվյալ դեպքում այդ կովաններից առաջինը հետազոտության առարկան ինքն է, այսինքն՝ Երվանդ Օտյանի կյանքի և ստեղծագործության ուսումնասիրությունը լուրջ գիտական խնդիր է և դեռ շատ մենագրությունների նյութ կարող է դառնալ։ Իսկ այդ մենագրություններն իրարից հավանաբար պիտի տարբերվեն նրանով, թե ուսումնասիրողներից յուրաքանչյուրն ինչ նոր հիմնահարցեր է դրել իր առջև և ինչպես է լուծել դրանք։

Ս. Մուրադյանն էլ իր հերթին այդպիսի փորձ ձեռնարկելիս ամենից առաջ պիտի որոշակիացներ, թե ինչ խնդիրներ են վերջնականապես լուծել ուրիշները, որոնց ինքը չպետք է անդրադառնա, ինչ հարցերի վերաբերյալ են հայտնվել վիճելի տեսակետներ, որոնք պետք է դրվեն ու լուծվեն նորովի, ինչ խնդիրներ կան, որոնք առհասարակ չեն դրվել և կարոտ են լուսաբանության։ Հարցադրումների այսպիսի հստակ սահմանադատումը Ս. Մուրադյանի ուսումնասիրության մեջ աչքի է դարնում հենց առաջին հայացքից։

Ուսումնասիրողների մի քանի սերունդ տարբեր առիթներով շարադրել է մեծ դրողի կենսագրությունը. կան նաև հենց իր՝ անվանի երգիծաբանի հանրահայտ հուշագրությունները։ Բայց Ս. Մուրադյանի շարադրանքը ցույց է տալիս, որ նույնիսկ այստեղ կան մոռի կետեր, լուսաբանված հարցեր։ Խնդիրը միայն կենսագրական մի շարք փաստերի ճշգրտումը չէ, որ կատարել է ուսումնասիրողը. առավել կարևորն այն է, որ նրա շարադրանքից պարզվում է երկու էական հանգամանք՝ Օտյանի կենսագրությունը, իրոք, սերտորեն շաղկապված է նրա ստեղծագործության հետ, և հետևաբար՝ գրողի կենսագրության ստեղծումը բանասիրական, գրականագիտական-տեսական խնդիր է։ Ս. Մուրադյանի շարադրանքը առաջին լուրջ բայլն է այդ ճանապարհին։

Օտյանին ներկայացնելով իրազարձությունների հարուստ դարաշրջանի համապատկերում՝ հեղինակն անհրաժեշտաբար կանգ է առնում այն դեպքերի ու գիծքերի վրա, որոնք պիտի կազմեին գրողի գեղարվեստական, հուշագրական ու հրապարակախոսական ժառանգության նյութը։ Դրանց հիման վրա աշխատության էջերում ուսումնասիրողը բացահայտում է իրականի և գեղարվեստականի հարաբերակցությունը Օտյանի ստեղծագործության մեջ՝ որպես նրա երգիծական արվեստի բնորոշ առանձնահատկություն։

Անչափ կարևոր է, որ Ս. Մուրադյանին հաջողվել է կառուցել Օտյան երգիծաբանի ստեղծագործական խառնվածքը և նրա գեղարվեստական ժառանգությունը ուսումնասիրելու ուշագրավ գիտական համակարգ, որը հնարավորություն է տալիս ստույգ չափանիշներով գնահատելու հայ երգիծաբանության զարգացման ընթացքը և ճշգրտելու Օտյանի տեղը հետպարոնյանական երգիծական գրականության մեջ։ Այդպիսով պարզ են դառնում Պարոնյանի արժանավոր հաջորդի գեղարվեստական մտածողության և երգիծանքի առանձնահատկությունները։ Հատուկ ընդգծվում է Հ. Պարոնյանի վիթխարի դերը հայ երգիծաբանական դպրոցի ստեղծման ասպարեզում։ Հենվելով գրականագիտության նվաճումների ու սեփական դիտարկումների վրա՝ ուսումնասիրողը համոզիչ փաստարկներով ու գիտական տրամաբանությամբ

ցույց է տալիս պարոնյանական ավանդների ծավալն ու նշանակությունը Օտյանի երգիծանքի համակարգում, երկու հղորագույն երգիծաբանների ընդհանրություններն ու տարբերությունները՝ միշտ ընդգծելով Օտյանի ստեղծագործական անհատականության նոսարական տարբերը։

Կուռ կառույց ունեցող այս մենագրությունն էջերում շաղկապված հաջորդականությամբ առաջադրվում և լուծվում են ինչպես ներ. Օտյանի կյանքին ու գործին վերաբերող, այնպես էլ առհասարակ երգիծաբանության՝ էական նշանակություն ունեցող հարցեր։ Ստացվել է ամբողջական դիտական շարադրանք, որը լիարժեք պատկերացում է տալիս Օտյանի գրական հասունացման ընթացքի, նրա լավագույն ստեղծագործությունների, երգիծանքի, կերպավորման արվեստի յուրահատկությունների մասին։

Օտյանի երգիծանքը մի կարևոր առանձնահատկություն ունի. նրա ամենագեղարվեստական երկերն անդամ աչքի են ընկնում շատ դղալի վավերագրական տարրերով, օտյանական շատ հանրաճանաչ հերոսներ ունեն իրենց իրական նախատիպերը։ Դա նկատվել է առաջին իսկ ուսումնասիրողների կողմից։ Տասնամյակների ընթացքում կատարվել են գիտականորեն հիմնավորված բազմաթիվ եզրակացություններ, որոնք արդեն առարկություն չեն հարուցում։ Բայց եղել են նաև ոչ հիշտ կռահումներ, իսկ որոշ հերոսների իրական նախատիպերի վերաբերյալ հարց առհասարակ չի դրվել։ Ս. Մուրադյանի ուսումնասիրության մեջ հատկապես այս բնագավառում կատարված են արժեքավոր դիտարկումներ ու ճշգրտումներ, որոնք սկզբնաղբյուրի նշանակություն կարող են ունենալ հետագա ուսումնասիրողների համար։ Սրա հետ կապված՝ Ս. Մուրադյանին հետաքրքրել է նաև մի այլ արդեն դուտ գրականագիտական-տեսական խնդիր՝ վավերական այդ անձերը Օտյանի ստեղծագործության մեջ ինչպե՞ս, երգիծանքի ի՞նչ միջոցներով, արվեստի ի՞նչ հնարանքներով են բարձրացվել ընդհանրացված տիպի աստիճանի։ Նյութի բազմակողմանի իմացությունը, լավատեղյակությունը երգիծանքի տեսությանը, համաշխարհային երգիծաբանության պատմությանը ուսումնասիրողին հնարավորություն են տվել այս մարդում ևս կատարելու շահեկան դիտարկումներ, համոզիչ եզրակացություններ։ Դա նկատելի է մանավանդ Օտյանի գլուխգործոցների՝ «Հեղափոխության մակարդակներին» և «Ընկ. Բ. Փանջունու» վերլուծությանը նվիրված էջերում։

Հայ քաղաքական երգիծանքի գլուխգործոցը՝ «Ընկ. Բ. Փանջունին», բնականաբար արժանացել է առանձնահատուկ քննության։ Այստեղ ևս թարմ հայացքով փաստերը համադրելու, նախկինում տարբեր պատճառներով չբացահայտված ճշմարտությունները վերհանելու հեղինակային ձգտումը պսակվել է հաջողությամբ։ Արժե նկատել, որ Ծապլվարի, Վասպուրականի ու տարագրության ջրջանի հերոսը, որպես փանջունիության երևույթի տիպականացած մարմնավորում, արժանացել է համակողմանի բնութագրման։ Ընկ. Բ. Փանջունին դիտարկվել է իր ծաղման, զարգացման ընթացքի մեջ, վերլուծության ընթացքում բնութագրվում է իր արկածախնդրական գործունեության արտաքուստ ծիծաղելի, բայց ըստ էության ողբերգական հետևանքներով։ Օտյանի այդ «համակրելի հերոսի» կուսակցական պատկանելության խնդիրը նույնպես ներկայացվում է նոր հայեցակետով. նկատի առնելով ներ. Օտյանի այն բացատրությունը, թե «իրական տիպ մը չէ Ընկեր Փանջունին, այլ խտացումն է հեղափոխական տիպերուն»՝ Ս. Մուրադյանը բազմաթիվ նոր փաստարկներով հիմնավորում է, որ Փանջունին միայն մեկ կուսակցության ներկայացուցիչ չէ. փանջունիներ եղել են ու կան բոլոր քաղաքական կուսակցություններում։ Եվ Օտյանի հերոսը, որ միայն դրության ջնորհիվ է դարձել հեղափոխական գործիչ, դեգերում է կուսակցությունից կուսակցություն, ճարպկությամբ փոխում է իր «աշխարհայացքները» ու համոզմունքները, ընդունում է նոր քաղաքական դույն ու երանգ՝ նայած որ կուսակցությունը իրեն կտա իշխանություն և նյութական բարեկեցություն։ Ինքը վերաշխնելու պատրվակով կարող է մի մի այն քանդել, վայելել քանդումի հնշտանքը՝ կառուցման տաժանքը թողնելով հաջորդներին։ Իրականի ու գեղարվեստականի, երգիծականի ու ողբերգականի հարաբերակցության բացահայտումներով հեղինակը հանդում է համոզիչ եզրահանգումների՝ ընդգծելով, որ «փանջունիները եղել են, դժբախտաբար կան և կլինեն, իսկ փանջունիությունը, իբրև միջազգային երևույթ, լինելու է մարդկությանն ուղեկցող առավել վտանգավոր չարիքների մեկը։ Եվ քանի դեռ կա այդ չարիքը, Օտյանի վեպի անհրաժեշտությունը կդրացվի օրի ու շրի պես» (էջ 196)։

Օտյանը մեր գրականության թերևս ամենարեղմնավոր հեղինակն է. ստեղծագործության ծավալի տեսակետից հազիվ թե որևէ մեկը կարողանա համեմատվել նրա հետ։ Անսպասելի չպիտի լիներ, ուրեմն, եթե պարզվեր, որ նրա առանձին երկեր դուրս մնացած լինեին նախորդ ուսումնասիրողների տեսադաշտից կամ առհասարակ անհայտ լինեին նրանց։ Ս. Մուրադյանի ուսումնասիրությունը հաստատում է այդպիսի ենթադրությունը. ուսումնասիրության

էջերում քննվում են Օտյանի՝ տարբեր ժանրերի մի քանի ստեղծագործություններ, որոնք ժամանակին կամ քիչ են ուսումնասիրվել, կամ առհասարակ չեն արժանացել որևէ ուշադրության։ Այս իմաստով էլ, ահա, կարևորությունն են ստանում աշխատության այն էջերը, որոնք վերաբերում են Օտյանի երգիծական դիմանկարների, վիպական կերպարների, Բատերդական երկերի և մանավանդ «Հերոսախաղ կատակերգության Թիվ 17 խաֆիեն» քառահատոր վեպի քննությանը։ Այս էջերում ևս ցուցադրվել են ուսումնասիրողի՝ գրականության պատմության և տեսության լայն իմացությունը, փաստերը համադրելու, գիտական բանավեճ մղելու և անհրաժեշտ եզրահանգումներ անելու անվիճելի կարողությունները, հանդամանք, որ ավելի համոզիչ ու ծանրակշիռ է դարձնել գրականագետի խոսքը։

Ս. Մուրադյանի ուսումնասիրությունը աչքի է ընկնում ցայտուն հետազոտական ակտիվությամբ և բանավիճային ուղղվածությամբ։ Ըստ արժանվույն գնահատելով նախորդ բոլոր ուսումնասիրողների ներդրումը օտյանագիտության մեջ՝ հեղինակը վիճարկում, վերանայում, ճշգրտում է նրանց շատ տեսակետներ՝ ինչպես մասնավոր, այնպես էլ սկզբունքային հարցերի վերաբերյալ՝ իր եզրակացությունները հենավորելով համոզիչ փաստարկներով և պահպանելով գիտական պատշաճության հարկը։ Շարադրանքի գիտական մթնոլորտը, այսպիսով, թանձրանում է քննական խորքով։

Մենագրության վերջում հեղինակն իր ուսումնասիրության արդյունքները ներկայացրել է եզրակացությունների տեսքով։ Այդ հանգիրճ ձևակերպումները յուրովի բնութագրում են կատարված աշխատանքը՝ «Ը. Օտյանի կենսագրության նորովի շարադրում, գրական հայացքների, գեղարվեստական մտածողության յուրահատկությունների բնութագրում, մեր գրականության զարգացման շղթայի մեջ և հատկապես երգիծարանության ասպարեզում նրա տեղի ու դերի ճշտում, արդի գրականագիտության պահանջների ու չափանիշների դիտակետից՝ առավել բնորոշ ստեղծագործությունների վերլուծում և արժեքավորում» (էջ 277)։

Ինչպես ամեն մի ծանրակշիռ ուսումնասիրություն, այնպես էլ Ս. Մուրադյանի մենագրությունը զերծ չէ թերություններից, վիճելի հարցադրումներից։ Այսպես, խորհրդային շրջանի հայ գրականագիտության մեջ Օտյանի և նրա ստեղծագործության մասին եղած տեսակետները վերանայելիս քննադատական կիրքը երբեմն հասնում է անհարկի խստության։ Կամ՝ շարադրանքի որոշ անվստահություն է դրսևորվում այն էջերում, որոնք նվիրված են դրական ուղղությունների ու մեթոդների, այս տեսակետից՝ երգիծարանության առանձնահատկությունների բնութագրությանն ու սահմանազատմանը։ Բայց յուրաքանչյուր դիտական աշխատանք պետք է արժեքավորվի ոչ այնքան նրանով, թե ինչ խնդիրներ է շրջանցել հեղինակը, որտեղ է թերացել ու վրիպել, որքան և ամենից առաջ նրանով, թե ինչ առկա արժեքներով է հարստացրել գիտության տվյալ բնագավառը։ Իսկ Ս. Մուրադյանի գործն այս առումով կարող է գիմանալ ամեն մի քննադատության։

Իբրև եզրակացություն՝ մեկ անգամ ևս հավաստենք, որ Ս. Մուրադյանի «երվանդ Օտյան. կյանքը և գործը» դիրքը ամբողջական քննական ուսումնասիրություն է երգիծարանի կյանքի, նրա գրական-հասարակական միջավայրի, ստեղծագործության հետ կապված սկզբունքային խնդիրների մասին։ Գիտական շրջանառության մեջ են դրվում նոր փաստեր, վկայություններ, անծանոթ էջեր ու վավերագրեր։ Կատարվում են բանասիրական և տեսական-վերլուծական ճշգրտումներ։ Հետաքրքիր են մանավանդ դրողի հանրահայտ ստեղծագործությունների նորովի ընթերցման հաջողված փորձերը։ Նոր լույսի տակ են ներկայացվում նաև Օտյանի կյանքի ու ստեղծագործության հետ կապված շատ փաստեր, հանգամանքներ, հարցեր, օտյանագիտությունը հարստացվում է վաստակաշատ ու մեկնաբանական նորությունները։ Դա առանձին նշանակություն է ստանում հատկապես հիմա, երբ անցյալի մշակութային արժեքների վերագնահատման անհրաժեշտությունը խիստ օրախնդիր է։

Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր